Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
հոկտեմբերի 28-ի N 1373 -Ա որոշման

Ց Ա Ն Կ

<<ԿԱՐՈԼԻՆԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Մոդելը	Չափի միավորը	Քանակը	Ծագման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
								տարի	եռամսյակ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.		Բնական հյութերի և նեկտարների պատրաստման հոսքագիծ, այդ թվում՝ պաստերիզատոր, մետաղյա տակառներ, մաքրման համակարգ, պոմպեր, ասեպտիկ տակառ, ղեկավարման վահանակներ, խողովակներ, պրոֆիլներ, կցամասեր, ծորակներ, ռեզերվուարներ, փականներ, վինտիլներ, չափիչ սարքեր, դրանց համալրող մասեր	TetraPak	լրակազմ	1	-	582000	2010թ.	III
2.		Բնական հյութերի և նեկտարների փաթեթավորման հոսքագիծ (փաթեթավորման սարքեր, տեղափոխ-ման սարքեր, կառավարման վահանակներ, խողո-վակներ, պրոֆիլներ, կցամասեր, դրանց համալրող մասեր)	TetraPak	լրակազմ	1	-	776000	2010թ.	III
3.	8414, 8421	Կոմպրեսոր, օդի զտման համակարգ	-	հատ	2	Գերմանիա	38090	2010թ.	III, IV
4.	8544, 7614, 9001, 7413	Մալուխ	-	կգ	3500	-	3560	2010թ. 2011թ.	III, IV I

10_1373

1	2	3	4	5	6	7	8	9	10
5.	8504	Տրանսֆորմատոր ուժային	-	հատ	2	Իտալիա	12800	2010թ. 2011թ.	III, IV I
6.	8537, 8538	Էլեկտրական մուտքային և ելքային վահաններ (բարձր և ցածր լարման)	-	հատ	12	-	20530	2010թ. 2011թ.	III, IV I
7.	8535, 8536	Ավտոմատ անջատիչներ և դրանց համար նախա-տեսված մետաղական արկղեր	-	հատ	150	-	6500	2010թ. 2011թ.	III, IV I
8.	8537, 8538	Մետաղական վահաններ	-	հատ	11	Ուկրաինա	2000	2010թ. 2011թ.	III, IV I
9.	8504	Անխափան սնուցման սարք	-	հատ	2	-	13800	2010թ. 2011թ.	III, IV I
10.	8502	Դիզելային գեներատոր	-	հատ	1	Ֆրանսիա	23280	2010թ. 2011թ.	III, IV I
11.	8704	Բեռնատար ավտոմեքենա	-	հատ	20	Ճապոնիա	259000	2010թ. 2011թ.	III, IV I, II, III, IV
12.	3208, 3209	Էպօքսիդային պրայմեր	-	կգ	2100	Թուրքիա	7130	2010թ. 2011թ.	III, IV I
13.	3907, 3208	Էպօքսիդային ծածկույթ	-	կգ	10500	Թուրքիա	28000	2010թ. 2011թ.	III, IV I
14.	2505	Կվարցային ավազ	-	կգ	7500	Թուրքիա	2550	2010թ. 2011թ.	III, IV I
15.	3814	Լուծիչ	-	կգ	200	Թուրքիա	500	2010թ. 2011թ.	III, IV I
16.	8414, 8415	Օդորակման չիլլեռ	-	հատ	2	-	18000	2010թ. 2011թ.	III, IV I
17.	8414, 8415	Օդորակման ֆանկոյլ	-	հատ	50	-	19250	2010թ. 2011թ.	III, IV I
18.	8414, 8415, 9032, 8536	Օդափոխիչ և օդազտիչ սարքավորում՝ ներառյալ դրանց կառավարման համակարգերը	-	հատ	8	-	47600	2010թ. 2011թ.	III, IV I

1	2	3	4	5	6	7	8	9	10
19.	9403	Օֆիսային կահույք (մետաղական, պլաստմասսայե և փայտյա)	-	հատ	450	-	12000	2010թ. 2011թ.	III, IV I, II, III
20.		Լաբորատոր սարքավորումներ և պարագաներ, այդ թվում՝ քարշիչ պահարան, անալիտիկ և տեխնիկական կշեռքներ, սառնարան, ջերմաչափեր, ջրային բաղնիքներ, չորանոց, էքսիկատորներ, ջրի թորման սարք, ֆոտոէլեկտրոկալորիմետր, մուֆելային վառարան, pH-մետր, իոնոմետր, ավտոկլավ, մանրադիտակ, էլեկտրական սալիկներ՝ ջեռուցիչ, պահարաններ՝ նախատեսված քիմիական ապակեղենի և քիմիական ռեակտիվների համար, լաբորատոր սեղաններ, վայրկյանաչափ, ավազի ժամացույցներ, մանրադիտակ, գորյանի խցիկ, չորացման պահարան՝ ջերմակարգավորիչ, բակտերիոցիդ լամպ, տոմային աբսորբցիոն սպեկտրոֆոտոմետր և(կամ) պոլյարոգրաֆ, ֆոտոէլեկտրոլուսաչափ, գազային քրոմոտոգրաֆ, նրբաշերտ քրոմոտոգրաֆ	-	հատ	56	-	6500	2010թ. 2011թ.	III, IV I, II, III
21.	8528	Տեսահսկման համակարգ, այդ թվում՝ տեսախցիկներ, սկվիչ, հսկման վահանակ, մոնիտորներ, տեսախցիկների ամրակներ, DVR սարք	-	հատ	45	-	11000	2010թ. 2011թ.	III, IV I, II, III
22.	8471, 8443, 8504, 8528	Համակարգչային տեխնիկա, այդ թվում՝ համակարգիչներ, տպող սարքեր, համակարգչի էկրաններ, մկնիկ, ստեղնաշար, հոսանքի անխափան սնուցման սարք	-	լրակազմ	15	-	7000	2010թ. 2011թ.	III, IV I, II, III
23.	9405	Լուսատուներ, լուսամփոփներ	-	հատ	130	-	2500	2010թ. 2011թ.	III, IV I

1	2	3	4	5	6	7	8	9	10
24.	7325	Ջրահեռացման համակարգ՝ չժանգոտող մետաղից	-	կգ	2200	Իտալիա	11000	2010թ. 2011թ.	III, IV I
25.	3916	Արտաքին երեսպատման պրոֆիլներ	-	կգ	15000	ՌԴ	18000	2010թ. 2011թ.	III, IV I
25.	8517	Հեռախոսակայանք, այդ թվում՝ միկրոհեռախոսա-կայանք, կոմունիկացիոն վահան, կոմուտատոր, երթուղավորիչ, սվիչ, մալուխային կառավարման վահան	-	հատ	290	-	15500	2010թ. 2011թ.	III, IV I
26.	8536	Ավտոմատ փողարկման սարք	-	հատ	1	Ֆրանսիա	950	2010թ. 2011թ.	III, IV I
27.	8416	Բոցամուղ	-	հատ	4	-	22500	2010թ. 2011թ.	III, IV I
28.	Ընդամենը						1967540000		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

10_1373

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
հոկտեմբերի 28-ի N 1373-Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

<<ԿԱՐՈԼԻՆԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան ------ ---------- 2010թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Ներսես Երիցյանի, մի կողմից, և «Կարոլինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Սարգիս Թարվերդյանի (այսուհետ՝ ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1373 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակեր-պությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը ավարտել ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված ներդրումային ծրագրում նշված՝ բնական հյութերի արտադրության կազմակերպումը.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 40 նոր աշխատատեղ, ապահովելով մոտ 70 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. Ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.6. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջել

ընկերությունից վճարելու հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1373 -Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ <<Ավելացված արժեքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.Պայմանագրի գործողության ժամկետը

5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարե-

ցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ